ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«11» «սեպտեմբերի» 2020թ. 336-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՇՏԱԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 7-Ի N 269-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, «Քաղաքացիական պաշտպանության մասին» օրենքի 9-րդ հոդվածով, Կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 46-Ն որոշման Հավելված N 1-ի 5-րդ կետի 1) ենթակետով և 16-րդ կետով, Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) քաղաքացիական պաշտպանության (այսուհետ՝ ՔՊ) շտաբ:

2. Հաստատել.

1) Նախարարության ՔՊ շտաբի անհատական կազմը՝ համաձայն հավելված N 1-ի,

2) Նախարարության ՔՊ շտաբի գործառույթները՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Ուսումնավարժությունների անցկացման ղեկավար նշանակել ՔՊ շտաբի պետին:

4.ՔՊ շտաբի պետին՝ ապահովել Նախարարության և ենթակա կազմակերպությունների արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և ՔՊ ոլորտներին առնչվող տարեկան հիմնական միջոցառումների ծրագրով (պլանով) նախատեսված ուսումնավարժությունների և վարժանքների անցկացումը:

5.Ուժը կորցրած ճանաչել շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի օգոստոսի 7-ի ‹‹Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության քաղաքացիական պաշտպանության շտաբի անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2009 թվականի նոյեմբերի 16-ի N 296-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին›› N 269-Ա հրամանը:

ՆԱԽԱՐԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

9/11/2020

X

ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN ROMANOS 3608790012

« 11 » սեպտեմբեր 2020թ.

ք.Երևան

Հավելված N 1
Շրջակա միջավայրի նախարարի
2020 թվականի սեպտեմբերի «11»-ի N33-Հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ

Շտաբի պետ՝

Աշոտ Ավալյան	գլխավոր քարտուղարի տեղակալ,

Շտաբի պետի տեղակալ՝

Արսեն Ավետիսյան	առաջին բաժնի պետ,

Շտաբի անդամներ՝

Էդգար Փիրումյան	լիցենզիաների, թույլտվությունների և համաձայնեցումների վարչության պետի պաշտոնակատար,
Գագիկ Մանուչարյան	մթնոլորտային քաղաքականության վարչության պետ,
Խաչատուր Խաչատրյան	իրավաբանական վարչության պետ,
Աշոտ Վարդևանյան	լիցենզիաների, թույլտվությունների և համաձայնեցումների վարչության պետական կադաստրների, ռեեստրների վարման և մոնիթորինգի բաժնի պետ,
Մարտին Մարգարյան	ֆինանսատնտեսական վարչության պետ,
Էդուարդ Սեինյան	Անտառային կոմիտեի գլխավոր քարտուղար,
Գայանե Շահնազարյան	շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ,
Արման Խաչիկյան	առաջին բաժնի զորահավաքի գծով ավագ մասնագետ:

Հավելված N 2
Շրջակա միջավայրի նախարար
2020 թվականի սեպտեմբերի «11»-ի N336-Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1.Քաղաքացիական պաշտպանության շտաբը ապահովում է.

ա)խաղաղ և ռազմական դրության ժամանակ զորահավաքային նախապատրաստության, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և ՔՊ միջոցառումների պլանավորումը և կազմակերպումը,

բ) անձնակազմի ազդարարումը և հավաքը,

գ) ՔՊ կազմավորումների անընդմեջ ղեկավարումը, ինչպես նաև տալիս է հանձնարարականներ և իրականացնում հսկողություն դրանց կատարման վերաբերյալ,

դ) ՔՊ կազմավորումների պատրաստականությանն ուղղված պլանային և արտապլանային ստուգումների իրականացնումը,

ե) Նախարարության և ենթակա կազմակերպությունների ՔՊ ղեկավար կազմի, ՔՊ կազմավորումների և աշխատակիցների հետ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և ՔՊ հարցերով պատրաստման և ուսուցման ընթացիկ միջոցառումների պլանավորումը և կազմակերպումը,

զ)պետությունը պաշտպանության նախապատրաստելու շրջանակներում Նախարարության անձնակազմի և պահեստային կառավարման կետերի աշխատանքային խմբերի հետ անցկացվող առանձնացված շտաբային մարզումների կազմակերպումը և իրականացումը,

է) փոխգործակցությունը ՔՊ կառավարման մարմինների հետ,

ը) ազդարարման համակարգերի և կառավարման պահեստային կետերի բնականոն գործունեությանն ուղղված աշխատանքների իրականացումը և ներկայացնում առաջարկություններ դրանց բարելավման վերաբերյալ,

թ) ՔՊ ծառայությունների և կազմավորումների մշտական պատրաստականության բարձրացմանն ուղղված գործընթացը:

2. ՔՊ շտաբը մասնակցում է՝

ա) ՔՊ ծառայությունների և կազմավորումների ստեղծման, նախապատրաստման և գործունեության ապահովման աշխատանքներին.

բ) Նախարարության և ենթակա կազմակերպությունների ՔՊ վիճակի համալիր գնահատմանը և գնահատման արդյունքներով ի հայտ եկած թերությունների վերացման պլան-ժամանակացույցով նախատեսված միջոցառումների կատարմանը,

գ) համակարգի աշխատակիցների ամրագրման ենթակա պաշտոնների և մասնագիտությունների ցանկի մշտապես թարմացմանը,

դ) զորահավաքային նախապատրաստության և ՔՊ հարցերով կազմակերպվող ուսումնավարժական հավաքներին, սեմինար-խորհրդակցություններին և պարապմունքներին:

3.համակարգում է Նախարարության և ենթակա կազմակերպությունների կողմից իրականացվող արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և ՔՊ ոլորտի աշխատանքները,

4. պարբերաբար ճշգրտում է Նախարարության և ենթակա կազմակերպությունների աշխատանքային ռեժիմների փոխադրման ներքին, ՔՊ, զորահավաքային, տարահանման և այլ պլանները ու ապահովում դրանց գործողության մեջ դնելը,

5.հսկողություն է սահմանում Նախարարության և ենթակա կազմակերպությունների կողմից ՔՊ գծով պարտականությունների կատարման նկատմամբ,

6.Նախարարության և ենթակա կազմակերպությունների ղեկավար կազմի, աշխատակիցների և ՔՊ կազմավորումների ՔՊ հարցերով նախապատրաստման և

կատարելագործման վերաբերյալ մշակում է առաջարկություններ և ներկայացում նախարարին,

7.Նախարարության և ենթակա կազմակերպությունների ղեկավար կազմի, աշխատակիցների և ՔՊ կազմավորումների ՔՊ հարցերով նախապատրաստության և կատարելագործման վերաբերյալ մշակում է առաջարկություններ և ներկայացում նախարարին,

8.զորահավաքային նախապատրաստության և ՔՊ միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն է ներկայացում նախարարին: